

փորստեաց մէջ սկսաւ որոնուիլ : Ի սոցանէ՝ Հոռմայեցեաց անցաւ Հարցուկ Հաշահմայորարիւն :

Մահն անցը մ'էր երկու կենաց մէջ Տիրսեհեան գաղափարաւ, ուստի ննջեցեալք մեծահանգիւս կը յուզարկուէին : — Այս Բնիկ-Ալիսատանի սեպ-հական եղականութիւնն է, ընդ ծնունդն և ընդ մահ առատարակ խնդութիւն և հանդէս. կը ծնանի՝ մեծ հանդէսներ կը լինին, կը փոխի՝ նոյնչափ և քուցէ աւելի ճոխ հանդէսներով յոռի կը դնեն : Յռչարկ. դէպ 'ի ո՞ւր. — Դէպ 'ի « յԱնմահից անծանօթ կամք » : — Այս սոյն երեղոյթ մինչև ցայսօր 'ի մեզ 'ի Հայս կ'երևի, ինչպէս պիտի տեսնեմք 'ի Դիցաբանութեան՝ Հայ Քրիստոնեայ եկեղեցի ամեն բան 'ի Հայ Մեհենից հնութեան քան-ձարանէն անփոփոխ ընդունած և անփոփոխ պահած է. արդ այսօր Հայ Եկեղեցի Ննջեցեաց յուզարկաւորութեան ժամանակ « Սպիտակազգեստ » լինել կ'աւանդէ, սպիտակ Շապիկ (Դպրաց) և սպիտակ շուրջառ, « անմահութեան » յիշատակ, Նորեւոկ սուրբոյթն՝ այդ անմահութեան օրինակն խաւարաթոյր զիշերով մը պատած է. սովայն այդ հայերէն չէ, օրինաւոր չէ, և ստրուկ ծառայականութիւն : Տօնացոյցն սպիտակ պատառակալ կը հրամայէ « Աւազ ուրբաթու » Քրիստոսի մահուան յիշատակ : (Տես Դիցաբանութեան մասն) :

Եւրոպական լեզուին վրայ հետաքրքրական է գիտել M. Fontaneի հետեւեալն. (Rome). — « Les Romains qualifieront la langue des Etrusques de « barbare », que leur alphabet parlé « ne distinguait pas », le b du p, le c du g, le d du t. Գուցէ այս ալ մեր այժմեան հայերենի նկարագիրն, ո՞ր գիտէ քանիցս աղաւաղած, բառ առ բառ, անառ առ տառ :

Շարայարեկ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՄՆ

ՅԵՐԵՐԱՊԵՏ

(Տես յ'էջ 231)

ՅՈՒԼԻՈՍ Հենրիկ Պետերմանն ծնած է ի Էլախաւ յամի 1801 յ'12 օգոստոսի : Նախ սեմական լեզուաց ուսմամբ պարապեցաւ, և 1829էն ի վեր հրատարակած էր գրուածք մը Քաղզէական Հնգամատենին կրկին Թարգմանութեանց վրայ : 1832ին Բրուսելոյ կառավարութիւնը զրկեց զինքն ի Ս. Ղազար՝ Թուրք և հայ լեզուները սորվելու. և զաս կ'առնուր ի Հ. Եւրոպոյ վարդապետէ Հիւրմիւզ, զոր կը կոչէ mein innigst verehrter

Lehrer, և որոյ յօրինած Գործնական համառոտ քերականութեան վրայ կը խօսի յուսումնաթերթին *Jahrbücher für wissenschaftliche Kritik* 1836 տարւոյն (ի հատորն Ա. Թիւ 13, յ'էջս 97—111): 1837ին Պետերսի հաւաքածոն ուսուցիչ անուանեցաւ, և ի նմին ամի հրատարակեց իր « Հայերէն լեզուի քերականութիւնն » լատինական բացատրութեամբ (*Grammatica linguæ Armeniacæ*, (Պետլին, էջք ԺԲ. 264): Գրուածքը երկու մասանց բաժնուած է. յորս առաջնոյն մէջ կը խօսի այբուբենի, (արեւմտեան) հնչման և տառից փոփոխութեանց վրայ: Ընթերցման դաս մեր առջեւ կը դնէ հեղինակն քաղուած մը ի գրոց Եզնրկայ՝ Որմզդի և Արմենի ծննդեան, ի հանդիպոյ հայ բնագրին կարգելով նաև զլատին թարգմանութիւն: Երկրորդ մասն է՝ բառագիրականն, ըստ սովորական ոճոյ և դրութեան: Նախագիտեմք լեռաց հատորն՝ զոր ի յառաջանի կը ծանուցանէր, երբեք լոյս չտեսաւ: — 1840ին Պետերմանն տպագրեց պատմական տեսութիւն մը արաբացի առաջիկանց յաշարհին Հայոց, այսպիսի վերնագրով. *De Ostikanis, arabicis gubernatoribus, commentatio* (ի Պետլին): Հետեւեալ տարին ընծայեց համառոտութիւն մը իւր քերականութեան: *Brevis linguæ Armenicæ grammatica, litteratura, chrestomathia, cum glossario*. Այս քերականութիւն՝ վեցերորդ հատոր է շարք մը երկասիրութեանց որ « Գուռն արեւելեան լեզուաց » (*Porta linguarum orientalium*) կը կոչուէին, և որոց հրատարակողն էր Պետերմանն: 1872ին երկրորդ տպագրութիւն մ'աւելրաւ այս զրքին, աւելցրնելով նաև արեւելեան հնչումը: Բուն քերականութեան ետեւը դրուած է մատենագիրական տեսութիւն կամ ցուցակ մը օգտակարագոյն և աւելի դիւրաւ ստանալի գրոց, ծաղկաքաղ ու բառարան մը՝ տէրունական աղօթքն ալ՝ իբրեւ ընթերցման դաս մը, լատին տառից ընդօրինակութեամբ և վերլուծմամբ: Ընտիր հատուածքն առնուած են ի Դնբնդոց գրոց, ի Խորենացոյն, ի Չամչեանէ, յեզնրկայ, յեղիշէէ, ի Փառաւորսէ Բիւզանդ, ի Գովհաննու Մանդակունւոյ և ի Նարեկացոյն: Պետերմանի շարագրած քերականութիւններն արհամարհելը՝ նսրելուկ սովորութիւն մ'է. բայց եթէ ուզենանք արդարախոհ ըլլալ ի դատելն, պէտք է խոստովանիլ թէ կարևոր ծառայութիւնք մատուցած են հայկական ուսմանց՝ այնպիսի ժամանակաց մէջ յորում Շրտէրի Գանձարանը հազիւ կարելի էր գտնել նաև ամենէն աւելի գլխաւոր մատենադարանաց մէջ: Տարակոյս չկոյ որ Պետերման լեզուագէտ (*linguiste*) չէր, և յաճախ յարահետ ուղւոյ կը խօսորէր երբ կը ջանար բառերը յստակել կամ մանր քննել. բայց 1872ին հրատարակութիւնը մեծապէս օգտակար է նոր սկսանողաց համար. լուրջ սորվելու համար՝ պէտք է նախ մանել ի ջուր: Աւելցրնենք թէ Պետերմանի այս քերականութիւնը՝ իրենց նպատակ ունին միայն զբաւար լեզուի ուսումը, կենդանի կամ խօսուած լեզուն կարօտ պիտի ըլլայ նոր գիտութեանց ընծայած միջոցներուն:

1844ին Պետերման ձեռնասու եղաւ ի հրատարակութիւն երկասիրութեան

մը որոյ նպատակն էր ցուցնել թէ որպիսի՝ բարեկարգութիւնը մնալ գտան ծովմանեան պետութեան գաւառաց մէջ 1839ին զրուած էիւլհանէի սահմանադրութեամբ. (Beitrage zu einer Geschichte der neuesten Reformen des osmanischen Reiches in Verbindung mit Ramis Effendi, Berlin).

1849ին հրատարակեց ղհայկական բնագիր սրբոյն իգնատիոսի Ատուածազգեցի ընծայուած թղթոց, լատինական թարգմանութեամբ ի հանդիպոյ. S. Ignatii Patris Apostolici quæ feruntur epistolæ una cum ejusdem martyrio, collatis editionibus græcis versionibusque syriaca, armenica, latinis, denuo recensuit notasque criticas adjecit Jul. Henr. Petermann, Lipsiæ 1849. էջք ԻԶ. 565. Յետագայ տարւոյն՝ Պետլինի Գիտութեանց Ակադեմիայի անգամակից եղաւ, և այն առթով սկսաւ բազմաթիւ հատուածներ հրատարակել նոյն ճեմարանին ամսօրեայ տետրակաց (bulletin) մէջ, ի Monatsberichte), ինչպէս նաեւ ի Յիշատակագիրս (Abhandlungen): Այսպէս 1852 փետրուար 2ին հրատարակուած թերթին մէջ (յ'էջս 87—104) հատուած մը կայ Մովսիսի խորհնացոյ գրաւոր աղբերաց վրայ, յորում Չամչեանի հետեւողութեամբ կ'ակնարկէ, որ եթէ Մովսէս ծնած ըլլար ի խորնի, պէտք էր որ խորհնցի կոչուէր և ոչ խորհնացի, որ խորնի (խորեան) անունէն կը յառաջագայի, բառակարթներ այս խնդրոյն վրայ երկար խօսեցաւ յուսումնաբերութիւն Zeitschrift der deutschen morgenländischen Gesellschaft, հատոր Խ. յ'էջ 457. 1860ին Յիշատակարանաց (Mémoires) մէջ կը գտնենք Պետերմանի մի'ա այլ ընտիր երկասիրութիւն մը խաչարաց պատմութեան վրայ ըստ հայկական աղբերաց: — 1865ին օգոստոս 17 թերթին մէջ (457—462) յօդուած մը գրաւ Եւսեբեայ ժամանակագրութեան հայ թարգմանութեան հիմա գտնուած բնագրաց և նորագոյն թարգմանութեանց վրայ, և որոյ շարունակութիւնն և ամբողջութիւնն երեցաւ 'ի թերթն 26 ապրիլ 1866 տարւոյն (311—317), Յիշենք այս առթով որ 1819ին Հոովմ գրկեր էր Նիէպուր բանասէրն իրմէ յօրինուած քննադատական մը Միլանու թարգմանութեան, այսպիսի վերնագրով. Ueber den historischen Gewinn aus der armenischen Uebersetzung der Chronik des Eusebius: — « Թէ ի'նչ օգուտ կրնանք քաղել պատմութեան համար Եւսեբեայ ժամանակագրութեան հայկական թարգմանութենէն »: — Այս հատուածս հրատարակեցաւ ի 1822: — 1866 տարւոյն. նոյեմբերի 26 թուոյն մէջ (707—741) ուսումնասիրութիւն մը հրատարակեց Պետերման Ազուլիսի գաւառաբարբառին վրայ՝ ի Պատկանեան փերովբէ մատակարարուած տեղեկութեանց համեմատ: Ազուլիս, ինչպէս յայտնի է, հին վասպուրական գաւառին Գողթինաց բաժնին մէջ կ'իյնայ, և բնակութիւն է Եկեղացիք կամ Զոկ կոչուած վանականանաց, որոնց գաւառաբարբառը անիմանայի է նոյն իսկ իրեն ամենէն աւելի մերձաւոր ազգակցաց: Պետերման նմոյշ մը կ'ընծայէ այս բարբառոյն՝ ժողովրդական վէպի

մը ձեռով՝ Մարգ. և գայլ կոչուած . 1866ին Յիշատակարանաց մէջ հրատա-
րակեց ուրիշ ուսումնասիրութիւն մը հայ գաւառաբարբառաց վրայ, և այս ան-
գամ թիֆլիզի ազգայնոց, հիմն դնելով՝ ինչպէս յառաջ ըսինք, Սայաթ Նո-
վայի քերթուածոց վրայ: 1867ին քննադատական տեսութիւն մը ընծայեց
Ալտրենեան Հ. Արսէն վարդապետի Հայ արդի լեզուի քերականութեան վրայ:

Գերման արեւելեան ընկերութեան օրագրին (Zeitschrift der deutschen
morgenländischen Gesellschaft) մէջ այլ յօդուածներ ունի Պետերման.
ինչպէս հինգերորդ հատորին մէջ (1856 յէջ 365—372) տեղեկութիւն մը
հայ երաժշտութեան վրայ վեց վիմագրեալ պատկերներով. ու հնգետասանե-
րորդ հատորին մէջ (յէջ 397) տեսութիւն մը հայկական լեզուով եղած քանի
մը հրատարակութեանց: Զեռնտու եղաւ նաև արքունի Համոյնագիտակ բառա-
րանին (Real-Encyklopädie für protestantische Theologie und
Kirche, երկրորդ տպագրութիւն 1877—1888, յովեւտասն հատորս). յորում
նշանաւորք են Պետերմանի հատուածքն՝ Հայաստանի վրայ ընդհանրապէս. Մը-
խիթար և Մխիթարեանք, Մովսէս Խորենացի, Ներսէս, Նեստորականք,
Սահակ, Դոռին: Յիշեցինք յառաջագոյն Եւսեբեայ ժամանակագրականին գրչաւ
զրաց հաւաքումը, զոր և թարգմանեց ի Լատին՝ Շէօնէ (Shoene) տպագրին
համար, որ յերկու հատորս հրատարակեցաւ ի Պերլլին ի 1875—6: Թարգմանեց
նաև ի լատին՝ այլ և այլ հատուածք Կիրակոսի Գանձակեցոյ պատմագրութե-
անն, յառաջին Պրակի « Երկու հայ պատմաց » Բրոսէի թարգմանութեամբ:

Ինչպէս հայ՝ ասանկ ալ սեմական լեզուաց մեծ հմտութիւն ունէր Պետեր-
ման. բայց մեր նպատակէն դուրս ըլլալով, աւելորդ կը սեպենք յերկարել
խօսքերնիս՝ յիշելով Մանդէսցոց Ալամայ զրբին տպագրութիւնն, սամա-
րացի Հնգամատեանն, սեմական լեզուաց քերականութիւններն, և այլն: Խօ-
սինք միայն իր Ուղեշրջարձան յարեւելս (Reisen im Orient) զրբին վրայ,
որոյ առաջին տպագրութիւնն լոյս տեսաւ ի Լայբցիկ ի 1860, և երկրորդն
ի 1865: Իր ուղեւորութիւնն տևեցին 1852էն մինչև ի 1855. գնաց ի
Դամասկոս, յ'Երուսաղէմ, ի Կիլիկիա, ի Մուսուլ և ի Բաղտատ: Երկրորդ
հատորին մէջ (224—235) շատ տեղեկութիւններ կու տայ Զուղայի Հայոց
վրայ, ուր երկար առտն կեցաւ: Մէջ կը բերէ նաև հետաքննական պատ-
մութիւնն Լէնկթիմուրի գրատան՝ զոր ի Սմըղանդ բերդի մը մէջ փակել
ու պահել տուաւ. զոր կը յիշէ Գապարանեան Գրիգոր վարդապետ՝ ի ծա-
նօթութիւնս գաղղիական թարգմանութեան պատմութեան գրոցն Կիլիշէի, և
իրմէ առնելով՝ նաև պարոն Նեւ ի հատորն քաներորդ « Ուղղափառ
համալսարանի » (Université catholique) յ'էջ 494: 1865ին վամպէրի,
հուլականուն աշխարհաշրջիկն, այցելեց ի Սմրզանդ, բայց այդպիսի գրատան
մը չհանդիպեցաւ: Լանստէլ անգղիացի (Henri Lansdell) յիւր գիրն Ռու-
սական կեդրոնական Ասիա (Russian Central Asia) տպագրեալ ի Լոն-
դրա ի 1885, ի հատորն առաջին՝ յ'էջ 583 կ'ըսէ. Nothing that I
saw and heard led me to think that anything of this kind e-

xisted. Իր մէկ քանի ուղեւորութեանց ասան՝ Պետերմաննի կ'ընկերանային վէթցսէին՝ Դամասկոսի բրուսաց հիւպատը, և Պրուշէ՝ երէց ի Պադուա. և միշտ իր ծառայութեան՝ Հայերը կը գործածէր, որպէս զի լաւագոյն վարժիմ, կ'ըսէ, անոնց լեզուին և խօսակցութեան:

1867—8ին այցելութիւն ըրաւ Պետերմանն իբրու հիւպատոս հիւսիսային Գերմանիոյ՝ ի Պադեռնին, յԱսորիս և յ'Երուսաղէմ. մեռաւ 1876ին ի Պատ Նաուհայմ: Մահուրէն ետքը փերզինանդ Խուսթի տպագրեց ի Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft (1884 յ'էջ 327—414) Պետերմաննի մէկ ընտիր ուսումնասիրութիւնը Պաթսից Եզիտի գաւառաբարբառին վերայ:

Որովհետեւ յաճախ առիթ ունեցանք յիշատակել Պերլինի Ալպրիմիոյ ամսօրեայ տեղեկագիրքը (Monatsberichte), յաւելունք թէ 1869 մարտ. 11 ամսաթիւերէն մէջ (յ'էջ 216—248) անուանի աշխարհագիրն Հ. Կիպլըդ յօդուած մը հրատարակեց խորագրովս. « Նախնական պատմութիւն Հայաստանի և Հայոց » (Ueber älteste Landes- und Volksgeschichte der Armenien, հանդերձ քարտիսիս):

Շարայաբեյի

Ծ Ա. Գ Ո Ւ Մ Ն

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹԵԱՆ

ա. Ծագումն քրիստոնէական ճարտարապետութեան. — ք. Իւր դասաւորութիւնն. — գ. Միջին դարն և իւր մեծութիւնն. — դ. Կրօնական շինուածոց ոճոյն գմահատութիւն. — ե Նախկին եկեղեցեաց ձևը Ե դարէն առաջ. 1. Գետնադամբանք, Աղբիւմակամք և Աղօթարանք. 2. Տաճարք (basiliques). — գ. Քիւզանդակամ ոճն:

Ա. Քրիստոնէական ճարտարապետութիւնն իւր ծագմանէն մինչեւ ի Եզար՝ հռոմէական ճարտարապետութենէ շատ չի տարբերիր: Այն ինչ եկեղեցին կրցաւ դետնադամբաններէ դուրս ելնել, իսկոյն իրեն սեփհականեց՝ ինչպէս պիտի տեսնեմք, բոլոր այն հռոմէական շէնքերը՝ զորս կրնար իւր պաշտաման համար գործածել: Քրիստոնեայք հեթանոսական տաճարաց գործածութիւնը արհամարհելով, աւելի քաղաքական շինուածոց վերայ աչք ձգեցին՝ որոնք կրնային իրենց ծառայել: Աստի կը սկսի ահա գլխաւոր կէտն ամենայն փոփոխութեանց՝ որոց ենթարկուեցաւ առ յապա քրիստոնէական ճարտարապետութիւնն: Սրբազան